Հարց 1. Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում

1. ժամային դրույքաչափի 30 տոկոսից ոչ պակաս չափով.

2. ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով.

3. ժամային դրույքաչափի 25 տոկոսից ոչ պակաս չափով:

Հարց 2. Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել՝

1. շաբաթական 40 ժամից.

2. շաբաթական 35 ժամից.

3. շաբաթական 36 ժամից.

4. շաբաթական 38 ժամից.

Հարց 3. Պետական ոչ առևտրային կազմակերպության գտնվելու վայրը՝

1. գործադիր մարմիններից որևէ մեկի գտնվելու վայրն է.

2. կազմակերպության ժամանակավոր գտնվելու վայրն է.

3. նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

Հարց 4. Պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է՝

1. պետական ոչ առևտրային կազմակերպությունը.

2. հիմնադիրը.

3. դատարանը:

Հարց 5. Նշվածներից ի՞նչ կարգով է անցկացվում միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում՝

1. Անվճար.

2. Վճարովի.

3. Մասնակի վճարովի: